

նէն աւելի համապատասխան եղող յօրինուած-  
քը :

Արտայայտութեան ձեւին մէջ այդ ընարողա-  
կանութիւնը Պ. Շահինի մած հրապոյը եւ միծ  
ուժը կը կազմէ : Ունի զմայլեփորէն թիվեա-  
ու քաղցր գորշութիւններ , նուրբ « մտարէ »-  
ներ , որ կաթեն հազիւ թիմեւ շուքով մը քերած  
անցած են պղինձն վրայէն , ինչպէս Ռիայիք  
գողոր գլուխին մէջ . ունի նաեւ ուժեւ ու  
խիստ գծեր , ինչպէս Տիկին Լուիզ Ֆրանսի  
կենդանագրին . Անզործ բանութիւն եւ « Արա-  
սիք » ծեր որմանդիրին մէջ . խոր ու թաշենի  
սեւեր ունի , ինչպէս Միս Նոյես կենդանագրին

մէջ . լայն ու համազօք գունաւորումներ ունի ,  
ինչպէս Պ. Լեռանի կենդանագրին մէջ , կարծես  
« լավի » ովզ շնուռուած :

Մերթ հասու է եւ մերթ փափուկ , ու եր-  
բենի երկուքը մը կանց . եւ դիմագծութեան մը  
ազնուութիւնը կամ ախտանիշերը , ամրոխի  
շարժումները , քաղաքներու համապատկիրները  
նշանակուած են իրենց ուրոյն նկարագրով ,  
իրենց ուժգնութեամբ կամ ստուերացումով ,  
իրենց ճշմարիտ լոյսին մէջ , բոլոր « փլան »-  
ները սքանչելի կերպով գէտուած :

Կիլլիլլիկ. ՍՈՒԼԻԼԻ.

(Մազգեալլը յաջորդ դիւով)



## Վարդամանց Շրջանը

(Պատմական մի կտակ)

**R**մբատոնէ ութիւնը մասու Հայ-  
յաստան թէ չէ՝ հայ ժողո-  
վրդին գործունէութեան  
հրապարակ հանեց , համաշռնչ զգաց-  
մունքներով հայերն միմնաց հնա մօ-  
տեցրեց-միմեանց հետ շաղակաց :

Հայ ժողովուրդը , որ մինչեւ քիստոնէու-  
թիւն , կրաւորական գեր էր կատարում իր  
հայերնիք անցած-քարածի մէջ , քիստոնէու-  
թեամբ գուէի տէր զարձած՝ հանդէս եկաւ ամ-  
բողջովին կառավարելու իր եկեղեցական աշ-  
խանիք :

Բնափիր հոգեւորականների հուանը , խան-  
դավառ գործունէութիւնը եւ ժողովրդի մէջ  
եղած բնածին հակումների աւետարանական  
գաղաքարներին համապատասխան լինելը՝ մի-  
անգամից զիւրացրին եկեղեցական հասարակա-  
պետութեան կազմակերպելու եւ գորանալու

գործը՝ նպաստեց նաեւ մեր թագաւորող աների  
ու իշխող նախարարների թէ տկարացած եւ թէ  
միմանց հետ գտուած կացութիւնը :

Մի ամրողջ գարի լարւած գործունէութիւնը  
հանդէս հանեց ժողովրդին զրահմուս գարձնե-  
լու պահանջը : Նայած գործ գրւած ջանքերին  
ու ծիգերին , արդիւնքը շատ պակաս էր երե-  
ւում : Ուսի և որ ժողովուրդը ինքը կարողա-  
նար կարգադ , հասկանալ , զիտակել : Չորրորդ  
դարի վերջերում այս պահանջը՝ իրուեւ առաջ-  
նակարգ անհրաժեշտութիւն՝ արձանաւու . հայ  
գործիների առաջ՝ եւ հայ ժողովրդ՝ հարա-  
զար զաւակը , Հացեկցի Մաշտոցը Ս. Մէ՛ռուովը  
տեսց հային իր ազգային զիւն ու զպրութեանը:

Բացեցեն զպրոցներ ամենայն տեղ , Հայ  
տառերին ծանօթանաւ , նրանց օրնաքեր պատուղ-  
ները քաղել շտապեցին ամենաքը , ամեն' քը ան-  
խիք պատասխ , երիտասարդ թէ ծեր : Այսպէս  
է վկայում ժամանակի պատմագիրը :

Գրահմտութիւնը , համանման գրքերի (Ս.  
Գիբը) ընթերցանութիւնը հայ ժողովրդի մուա-  
ւոր ասիմճանը բարձրացրեց , միմանց միջնեւ  
յարաքրութիւնները դիւրացրեց եւ համանան  
գաղաքարներով միմնաց հետ ամուռ շվթայեց-  
իւրակաէս եղբարացրեց եւ կազմեց ու պատ-  
րաստեց աշխարհային ամեն տեսակ փոթորկե-  
ների գէմ իրգի ապատութիւնը պաշտպանելու :

Հասաւ փորձնեան ժամը - տեղաց փոթու-

**Իրկը:** Պարսիկը գրո՞ւ տւեց մեր երկիրը։ Մոխ-  
րապաշտութիւնը կոիւ հրատարակեց քրիստո-  
նէութեան դէմ։

Բանակալութիւնը եկաւ մեր երկիրը ահեղօք բէն ամպոտեց-միգապատեց, մեր ազգային զլադոցը եկաւ հայի զիմագրութեան ճանապարհ փառոսեց :

Քրիստոնեայ Ալքարատեան մեր բնաշխարհը  
սուքի կանգնեց, իր 86,000 Կտրիները կուփ  
դաշտն ուղարկեց և ինքն ամբողջիվիճ զինեց  
իր խնձի պատառթիւնը պայտանելու:

Digitized by srujanika

Աւարայրի պաշտօնական ճակատը պարտութիւն կրեց . Վարդան Մամիկոնեան 1036 ընտիր քաջնորդ Նահատակւեց , բանակը ցրեց . բայց Կոփէր չենթացաւ : Աւարայրի փոխանակ՝ Արյարատը արթիւնեց . զինուորների փոխանակ՝ ժողովուրդը շարժեց — թողեց տան , կալուածու հարստութիւն , եւ հոգին , գաղափարը , պատիւը գերադասեց : Նիւթենէն տաճարները գուցեց , ինքնին անճնօրէն տաճարացաւ :

Երբէ՛ք Մասին այնքան ուժգին չէր հրաբը-  
խել, ինչպէս Այրարատեան ժողովուրդը հրա-  
բից առանց խորութեան մեռի ու գասակար-  
գի : Երբէք մեր քնաշխարհն Այրարատ այնպէս  
զմայելիօրէն չէր գարունել, ինչպէս զարու-  
նեց ալրարատցին, հանդէս հանելով իր բարո-  
յական կհանքի երփներանգ ծաղիկներն ու բու-  
րակից վննիկր :

Պահ մի դիմենը մեր անմահ Նղյէկին եւ  
այդ հերոսական շրջանը պատվիքացնող բռլոր  
մեր պատմագրներին, կենազնացները մեր մռգի  
մէջ այն կեանք-փոթորկի, այն հաւատ-դիմադ-  
րութեան թովիչ պատվիքը :

— Թողին բնակիչներն իրենց գվաղերն ու քաղաքները. Դուրս եկան իշխանազուններն իրենց շքեղ ապարաններից, փափկատուն հարուներն առագաստներից, նորափեսաններն իրենց սենեկաններից: Վայր իջան ծերերն աթոռներից, երեխանները մայրենի գրկերից և ամենքը, ամենըը գնացին լեռների ու ձորերի մէջ ապաստաննեցին: Լաւ համարեցին պատւարութեամբ ապրիլ Քարայրների մէջ, քան ուրացութեամբ վախեռաթեւնների մէջ:

Առանց տրտնջալու կերակրում էին վայրենի խոտերով եւ բնաւ չէին փուլմ իրենց սու-

## **Վորական խորտիկները :**

Լուեցն սիրոյ երգերը . Փշրւեցին գուսան-  
ների տաւելիները . Կորաւաւեցն քնարի լարերը :  
Նրանց միջիթարութիւնը՝ սազմունեն էին ու  
իրենց հերուների կասարած սիրագործութեան  
պատմութիւնները : Ամենքը իրենց օիրուր տա-  
ճար եւ անձը քահանայ էին համարում , մար-  
մինը սուրբ սեղան եւ հոգին ընդունելի պա-  
տարագ : Ոչ ոք յուսահատութեամբ չէր սգում  
սրախողնոր սպանաւածների վրայ եւ ոչ էլ ող-  
բում իր մերձաւոր սիրելուն : Համբերութեամբ  
ճգնում էին , սուաքինութեամբ նահատակում :  
Վկայութեան հրեշտակի թեւերի տակ փրկու-  
թեան ու յաղթութեան հրեշտակին էին սպա-  
սում : Այս ամենի հետ եւ պատահած տեղը՝  
հայ քաջերը կասարութեամբ թշնամու հետ էին  
կուռում : Կապոյա լեռներ , Տմորիքի ամրու-  
թիւններ , Խաղողեաց բարձրութիւններ , Արցա-  
խի անտառներ այս կոփների վկայութիւններից  
արիւնեցան :

Խորի ու գործի հրաշալի խտացումն էին եկն եկեղեցու սուրբ հայրերը և աղքային գպրոցի շարժման վարժապետներն ու վարդապետները : Նրանք հեռուից չէին ձեռքի նշաններ տալի եւ ոչ ազատ երկրից ու ազատ գաղթիներից ճառեր թնդացնում, թղթեր մրտառում, այլ բռն երկրի մէջ, արին գործի մէջ իրենց անձի օրինակով լին հանդէս ի հնում: Նրանք սրտացաւ միխթարիչն էին, երբ սուզի մէջ էր հայր : Նրանք ողելունչ ոգեսորողը՝ երբ կտումն ու վնասումն մտենում էր հային. Նրանք խաչ ու սուր ձեռքներին իրենց լանջով ընդապազզն էին թշնամու, երբ մասամբ նորդ էր հայր . Նրանք ամենից առաջ առաջ գահիները սրերի տակ իրենց պարասոցներ մեկնողն էին, երբ այդ սրերը գոյն էին ազգում հային: Նրանք խոնաց ամսերի մէջ ծանր կապանքների տափից շղթայակապ նախարարների ու իշխանների վրձակն ամոռող ու հոգիների կազդուրող էին, երբ վհատութիւն ու թուլութիւն ուղղում էին մտենալ հայիներին :

Այսուհետեւ կայ կենացքի բարոյատենչ  
ոգու ծնողները, ինքնապաշտպանութեան կայ-  
եերը կրտեն զարմանողները, դիմաղրական շարժ-  
ման ու ընթացքի ղեկավարները եւ արիւն կոսկի-  
մէջ առաջնուն ննաւող ու մերժին եւնոտները :

Ուրիքի էր ելած եւ. հայ հերոսներին ծնող հայութիւն :

Իրենց տղամարդկանց հետ միասին թողեցին քեր ապարանքներն , ու լոռ , անապատու քարանձաւ գուշւեցին քնըրոյ հայ տիկինները : մնուակր թէ իշխանունի , քաղաքացի թէ գեղջունի : Ե՛լ չիթեցին կեանքի գավկութիւն . մոտացութեան սուբն կեանքի յարմարութիւն : Շարմաղ հացի տեղ , կորեկ էին ուտում . անարատ-անապակ զինու տեղ՝ ջուրը չափով խմում : Կերպասի ու ուկեկար հագուստի տեղ բրդէ կոշտ շորեր էին հագնում :

Ընկան ոսկէ գնդին ականջներից , կոտրտւեցին աղամանղաղարդ ապարանջանները , կորան-չքացան զոյնդոյն զմրուխաներով վասուով թեւկազնները , փշրեցին-կողոպութեցին մարգարիտու ու բիւրեզ , յակինթ ու սուտակ մատանիները :

Է՛լ անուշարոյք իւղերով չօծեցին վարսագեղ զին զլուխները , փղոսկրեայ ասնորով չկոկեցին սաթմափայլ մազները : Բակեայ գեղղիրն էլ չը սուրայից սեւրորդ աշքնիրի արտաւանունքները . Էլ մորիտ չծաղկեց նրանց բարակ շրոթուններին :

Կեանքի պայմանները հաւասարացրել էին ամենքն , չէ՞ր կարեի նշմարել թէ որն էր տիկին և որն ազախին : Ոչ մէկը միւսու համար անկորոն չէր պատրաստում . բոլորը միւսին մորկում էին խոսի վրայ գետսի կոչու երեխն :

Զկային նրանց համար ասանձին խռաբարներ համագամ կերպուրներ պատրաստող եւ ոչ մատուռակներ զովարար օշաբակներ մատուցանող : Արժաբար ջրածիկն էլ չխօսեցաւ ձեռքներին ջուր ածելու եւ ոչ անուշահու օճառը զիպատ նրանց զումաշ երեխն :

Ոչ մաքուր ամաններ զարսւեցին նրանց առաջ , ոչ ուրախութեան բաժանմեր : Այլ եւս ինդրակներ չացցին նրանց գնները ևւ ոչ ոք չը կանգնեց գնների առաջ հրերը ընդունելու . նրանց չըլեզազարդ զահիճները այլ եւս չացցին ինձոքիների համար :

Փոշուուեցին-ծխոսուեցին նորսապակ հարսների սրահակները . սարդի սոտայով ծածկւեցին նրանց հարսնաւթեան սենեակները : Զքացան աների զարդ ու զարգարմանները : Փշա-

ցան-անշքացան նրանց սեղանի պարագաները : Փուլ եկան-քանդուեցին հոյակապ ապարանները . կործանւեցին-աւելուեցին նրանց ապահովութեան ամրոցները :

Չորացան-ապանձւեցին ծաղկալից բուրաստանները . արմատախիլ եղան զիներեր այգիների վաղները իրենց աչքերով տեսան կալերի յափշտակութիւն : իրենց ականջներով լսեցին սիրելիների հառաջանքները : Նրանց գանձերը թագւորական արին , գլուխների ու ձեռքերի թանկազին զարդերը չարագործ ձեռքեր կողոպտեցին :

Միրուն մնր աշխարհի գավկասուն տիկինները , որ պահեւել մեծացել էին կակուղ ծածկոցների տակ , փափուկ պատգարակների մէջ , բռովկի ոսթքերով էին ման գալի : Նրանք , որ մանկութիւնից նորթի ուղեղով , որսի կակուղ մերով էին կերպարել , մեծ ուրախութեամբ խոսակիր կեանք էին վարում : Մոռացան նախակին քնքայութիւն . սեւացաւ-ներկեց նրանց մարմին ծիւնափայլ մորթը . ցերեկը արեւախուրով էին լինում , զիշերը զեանի վրայ պարկուտում :

Մոռացան կեանքի տկարութիւն . կոփւաւին մնղքի դէմ , կորեցին նրա չարաբեր արմատանները : Իրենց կեանքով նմանացին քաջ մահաւում նահատակաւի ածներին . հնսուց միսիթարիչ ուսուցիչներ գարձան բանտարկւածներին : Նրենց նազուկ ձեռքերով աշխատեցին ու կերպարեցին . իրենց համար նշանակւած թռչակները անտեսեցին , • կաւած-կալանաւոր իրենց թանգ սիրելիներին տաբէցարի ուղարկելով՝ միսիթարեցին :

Ծա՛ր մնմաններ անցան , շա՛ ա ձիւներ հաւացին . գարունը բացւեց . նոր ծիծնուներ թռանեկան . կենցազաւէր մարզիկ մեսան այդ՝ ուրախացան , բայց մեր աշխարհի սպաւուր նայեց երեք չխօսան իրենց սիրելիներին : Դարանանյան ծաղկները նրանց միտք բերին իրենց անձկալի ամուսիններին , բայց աշխները կարում մնացին նրանց ցանկալի երեսներին : Ողբը ողբը շատ արցունքներ թափեցին , լատ արձաններ կեանքնեցին եւ սրանց վրայ իրենց սիրելիների ինսկելի անունները նշանակեցին : —

Եւ այս զիշազանակն կացութիւնը շարունակուեած պատերազ-

մի դրօշակը մի զինւորի ձևոքում չէր եւ ոչ էլ  
մի քամի զինւորի, այլ մի ամբողջ ժողովրդի .  
այս պատճառով՝ ոչ գետին էր ընկնում եւ ոչ  
թշնամու ձեռքին անդնում :

Աղջտների մէջ հայ ժողովրդի հողին զօրա-  
ցի էր, զրկանքների ու պայքարների մէջ արիա-  
ցիլ : Այսքան առատութեամբ թափած իր ար-  
իւնը, զոհաբերած հերոսները, համբերած-տա-  
րած տանջանքները առամլ նույիրական, առա-  
ւել թանկ, առաւել անհամեշտ էին դարձրիլ  
խզի ազատութիւնը եւ առաւել հաւատ էին  
ներշնչել յաղթանակը տանելու :

Ժողովուրդը հոգու ամբողջ զօրութեամբ  
գիտակից էր իր վարած կուլն, հաւատում էր  
իր ընթացքի հձարտութիւնը : Եւ այս կուլ  
կորած սերունացից առաջ ևկած նոր սերունացը  
վարում-շարունակում էր ժառանգութիւն առա-  
ցած ուղը պայքարը :

Հայ ժողովրդի յամառ ըմբուտոցումը, ժայռ  
դիմադրութիւնը, մինչեւ վերջին շունչը զո՞-  
ւելու ակներեւ վճռակնութիւնը, միանալով  
այլնայլ գժգոնութիւններին ու տեղական կու-  
տակցութիւններին՝ շարժեցին Սասանեան ար-  
քունքի խաղաղութիւնը, առաջ բերին զէմը  
ու զաւեր, պաշտամական յեղափոխութիւններ  
ու գանհնեցութիւններ մինչեւ որ հերոս ժա-  
մանակների եւ հերոս զարմի ծնունդ վահան  
Մամիկոնեան՝ եւս, անտառ ու քարանձաւ կին-  
դանի զպրոցներից ելած քաջարի ընկերներով  
նուարակի մէջ 485 թ. փառաւոր գանձագրու-  
թեամբ ճանաչէլ տեսց Պարոկին հայ ժողովրդի  
պաշտամանձ զատի արդարութիւնը :

Հայ ժողովուրդը եւաւ անտառից ու քա-  
րանձագից՝ գիւղ ու քաղաք իջաւ իր տարած  
յաղթանակով պատկ բոլորեւու յամառ կուլ ըն-  
թագրում մարտիրոսացած իր քաջերի անմահ  
յիշտաւակին, եւ իր ընթացքը, իր օրէնակը իրուն  
յափառեական սրբազն կոտակ թոյնելու յա-  
ջորդ սերունդներին :

Մ. ա.-ք. Մելեն

24 Փետր. 1905 թ. Գարիգ

## ԽՈՐԴՈՂԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Փարիզեան Հայ. Եկեղեցու ըուրչը



Իր առաջին անգամ լուր  
տարածեց Հայերիս մէջ թէ՝  
Փարիզում մի մժամանու  
շքեր հայկական եկեղեցի է

կառուցում, ուղար մտածող ազգայինների մէջ,  
Կամս թէ բնացումով, անընչափէ ծագեց

ան յոյր, թէ անչուտ եկեղեցուն կից պիտի  
հիմունի եւ մի մեծ կրթական հաստատութիւն,

մի զպրանց, որը կարողանար առաջարարութիւն  
առ մեր ազգի այժման գլխաւոր պահանջնեւ-  
րից մէկին եւ որը, լրացնելով եկեղեցու կո-  
չումը, նրա հետ միասին կազմէր մի բարյա-  
կան եւ մտածուր հայկական կենտրոն քաղաքա-

կիրթ ապատ երկրում : Հիմի հետաքրքիր լինինք  
փոքր ինչ հասկանալու այս հասարակն ինապ-  
դումնի եւ յոյսի հրմանքը : Նախ որ մեր ազգի  
պատմութեան ընթացքում, քրիստոնէութեան

առաջին գարգութը սկսած մինչեւ մաս մամանակ,  
հայ եկեղեցին անփետի կերպով միասութած է

եղի քաստիքակութեան եւ լուսաւորութեան  
գործի հետ, այնպէս որ զատարարութիւնը

նույն ժողովրդի աշըում մէկնելու անհրաժեշտ  
պաշտամունքներից մէկն է համարած :

Այդ պէտ տեսած է, այդպէս սովորած է մեր ազգը,  
որ եկեղեցու պարականութիւնը միասն ասո-  
ւածակատառութեան էնսեր կատարելը չէ, այ

զիսի որպէս ուսում աստծոելու իր հօգու մէկն  
նևսոի մեր ժողովրդի հայեցակեալ, երբ մի

եկեղեցի իւր զպրոր յունի նա զարողաց-  
ած չէ, նա զար կիՍԱՅ է Ռուբ՛ զ այդ հայ-  
յեցէսը թէ պատ — հարցը այդ մասին չէ  
այժմ, այլ թէ զա՞ է հայ ժողովուրդի աւան-

դական հոգեբանութիւնը այդ խնդրում :

Երկրորդ, որ մեր հայ զարաւուների պատ-  
մունքներց յայտնի է թէ՝ ու ու ու նեաւուր եր-  
կրմանում Հայու եկեղեցի է կառուցել առաջն  
զպրոցի, «առաջ մտաւոր պարագայ կազմու-

նեկեղեցու շորքը, արգավիր եկեղեցների վերջ ի  
վերջոյ թագուցի մասեցի եւ ծախուել է առար-

ներին, ինչպէս Անստեղուամի եկեղեցին էր եւ  
այլ նմանները : Աւասի մեմն մտածող ազգային

բնականարար պատկ նեթուորքը թէ՝ այդքան  
ակնյայն փոլմէրից յետոյ երբ այս հետաւոր

զարում մի համեմատաբար փոքր զաղութի  
համար այնքան մեծ ծախս է անսում եկեղեցու

վրայ, ու ուկ չուպութիւն չէ, այլ միզօքն է  
երկանց, որին պատի հետեւին եկեղեցու հոյս-  
կազմութեան համեմատ զպրանց իւր ուսուցչու-

